

RITA SOULAHIAN-KUYUMJIAN. Archeology of Madness. Komitas. Portrait of an Armenian Icon. Gomidas Institute. Princeton, New Jersey, 2001, 241 pages.

ՌԻՏԱ ՍՅՈՒԼԱՆՅԱՆ-ԿՈՒՅՈՒՄՋԻԱՆ. Խելագարութեան հնագիտությունը: Կոմիտաս: Մի հայ սրբապատկերի դիմանկարը: Կոմիտաս ինստիտուտ: Փրինսթոն, Նյու Ջերսի, 2001, 241 էջ:

«Հյուրերի ինքնաշարժերը սկսեցին ժամանել... դահլիճը լեփ լեցուն էր... իշխանը՝ Թալեաթ բեյը և մյուս բարձրաստիճան կառավարական սլաշառնյանները այնտեղ էին... գրողներ, գիտնականներ և մահմեդական կրոնավորներ եկան մեկը մյուսի ետևից... Ես մինչ այդ ճանաչում էի Կոմիտաս վարդապետին... բայց նա այնքան փոխված, այնքան դուռնա և տխուր տեսք ուներ: Արարողապետը՝ Համգուլազ Սուբաշին ներկայացրեց Կոմիտասին և ասաց... «Անատոլիայի այս զավակը, մի հայ եկեղեցական իր նվիրվածությամբ և քրտնաջան աշխատանքով թևեր է տվել հայկական երաժշտությանը... նա արհամարհեց հարմարավետությունն ու ճոխությունը և անցկացրեց իր ժամանակը գյուղերում ժողովելով ժողովրդական երգեր... և ներկայացրեց այս երգերն իբրև հայկական ազգային ժառանգություն... Եթե միայն մեր կրոնավորները նույն բանն անեին: ...ինչ գանձեր կգտնեին, գանձեր, որոնք կբարձրացնեին թուրք ազգի զգայուն սրտի և խորհող մտքի արժեքը... ճշմարտությունն այն է... որ հայ ազգը մնում է մեր մշակութային կյանքի առաջնակարգ գծում: Ուր էլ որ գնաս Թուրքիայում, Անատոլիայի ուղած անկյունում, հայ միտքը, հայ ստեղծագործ միտքը և ձեռքը կողջունեն ձեզ և կասեն ձեզ՝ «ես այստեղ եմ»: Եթե դնաք սուլթանների պալատները՝ ճարտարապետները հայեր են... Ձեր սիրելիքայինների շիրմաքարերը, որոնք այդքան դեղեցիկ են փորագրված, հայ վարպետների գործերն են... Հայ վարպետները նաև պատրաստում են վանի աշխարհահազակ ոսկերչական տուփերը... բժշկական դպրոցի հիմնադիրները և դիտական գրքեր գրողները նույնպես հայերն են...»

Դա ժողովուրդ է, որի հետ մենք ապրել ենք դարեր շարունակ»:

Այնուհետև Կոմիտասը նստեց դաշնամուրի առջև, երգեց և նվագեց... դահլիճն արձագանքեց որոարնդոստ ծափահարություններով... և դուք կարող էիք լսել բացականչություններ... «Աստված փրկի նրան չար աչքից...» (էջ 115):

Այս գրվածքը իր «Խելագարություն հնագիտությունը: Կոմիտաս: Մի հայ սրբապատկերի դիմանկարը» գրքում վկայակոչել է Ռ. Սյուլահյան-Կույումջյանը՝ այն վերցնելով Հ. Սիրունու «Կոմիտասի հետ» հուշագրությունից¹: Հայտնի է, որ աստված չփրկեց Կոմիտասին թուրքի ոչ չար աչքից և ոչ էլ չար ձեռքից: «Այդ հավաքույթից միայն երեք շաբաթ անց, – գրում է Ռ. Սյուլահյան-Կույումջյանը, – պատահապես սանձազերծվեց կառավարության ցեղասպան արշավը հայերի դեմ» (էջ 115):

1915 թ. ապրիլի 24-ին Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթ բեյը հրամանով Կ. Պոլսում ձերբակալվեցին ավելի քան 200 հայ մտավորականներ, որոնց թվում էր և Կոմիտասը: Նրանցից կազմված աքսորականների քարավանն ուղարկվեց Անատոլիայի խորքերը՝ բնաջնջելու համար: Այսպես իթիհադական ղեկավարությունը հայոց ցեղասպանությունը սկսեց ազգի դիտամամբ՝ ոչնչացնելով նրա ուղեղը: Լինչվեա, ինչպես նշում է գրքի հեղինակը, հիշյալ հավաքույթը, որին հրավիրված միակ հայը Կոմիտասն էր, գուժարվել էր մի խումբ թուրք մտավորականների նախաձեռնությամբ՝ աշխարհին, մասնավորապես, Եվրոպային ցույց տալու հա-

¹ «Էջմիածին», 1968, № 3, էջ 45-46:

մար, որ թուրքերը ևս բարձր մշակույթ ունեցող ժողովուրդ են: Ստիպան մի քանի շաբաթ էր սեփեք վերստին ասպացուցելու համար, որ թուրքը եղել ու մնում էր քաղաքակրթութիւնից անհուսալիորեն հեռու վարիների բոշփօշփ, որը առաջնորդվում էր ոչ թե բանականութեամբ, այլ իր երկրպագած գորշ գայլի քնազղնելով:

Ռ. Սյուլահյան-Կուլումջյանի գրքի վերնադիրն արդեն հուշում է , որ այն զրված է ոչ թե թանաքով, այլ հոգու արյունով: Դա Մեծ եղեռնը հրաշքով վերապրածների արդեն սարազրուծյալ մեջ ծնված երրորդ սերնդի հոգու ճիչն է, ցասումնալից բողոքը՝ նետված մեծ տերութիւնների երեսին, որոնք առ այսօր չեն ցանկանում ճանաչել մինչև իսկ Հայոց ցեղասպանութեան փաստը, թեև իրենք ուղղակիորեն կամ անուղղակիորեն մեղսակից են հակամարդկային այդ ամենամեծ ոճրին:

Այո, առաջին հայացքից անսովոր, բայց զարմանալիորեն ճիշտ դտնված և սլասկերալոր վերնադիրը կրող զիրքը լույս է տեսել ԱՄՆ-ում, անգլիերեն, բայց, ղժրախոսաբար, առ այսօր արժանի արձագանք չի գտել մեզ մոտ Հայաստանում: Արտասահմանում այն արժանացել է բարձր գնահատականի ամենից առաջ Հայ դատի ճանաչված մասնագետների և հոգևորականների կողմից:

Հարսպատ ժողովրդի ճակատագրի հանդեպ մահահոգութունն էլ, թերևս, զրդել է Ռ. Սյուլահյան-Կուլումջյանին, որը հրաժշտագետ չէ և ոչ էլ պատմաբան, գրելու այս, Վ. Տատրյանի ղնահատմամբ՝ «Երբորինակ» օրովհետև Կոմիտասի մասին տարբեր լեզուներով շատ-շատ է զրված թե՛ մեզ մոտ և թե՛ Արևմուտքում: Ա. Չոպանյան, Կ. Հովսեփյան, Ռ. Թերլեմեզյան, Թ. Աղաոյան, Շ. Պերպերյան, Ռ. Արմաշյան, Ս. Գասպարյան, Ա. Շահվերդյան, Թ. Յուլյան, Ն. Թահմիզյան, Գ. Գեոգալյան, Ս. Փոլադյան, Հ. Սիրունի, Ս. Թաշյան, Տ. Զիթունի, Ա. Անտոնյան, ահա ոչ լրիվ ցանկն այն հեղինակների, որոնք գրել են Կոմիտասի մասին: Նրանցից ոմանք, ինչպես Ռ. Աթոյանը, իրենց ստեղծագործական ողջ կյանքը նվիրել են Կոմիտասագիտութեանը: Կոմիտասի և

նրա ստեղծագործութեան վերաբերյալ կա վիթխարի գրականութուն՝ կենսագրական, պատմագրական, երաժշտագիտական, հուշագրական բնույթի մենագրութիւններ ու հոդվածներ: Թվում է, թե ոչ մի նոր, էական բան ասել Հայ ժողովրդի երաժշտական հանճարի մասին այլևս հնարավոր չէ: Բայց Ռ. Սյուլահյան-Կուլումջյանն ասպացուցել է, որ այդպես չէ, քանզի ուսումնասիրել է Կոմիտասի կյանքն ամենից առաջ իրրև հոգեբույժ խորանալով նրա հիվանդութեան պատճառների և հետևանքների մեջ:

Հեղինակն ուսումնասիրել է Հայոց ցեղասպանութեանը և Հայ դատին նվիրված գրականութիւնը, մտմուլը, այն ամենը, ինչ գրել է Կոմիտասը և ինչ գրվել է Կոմիտասի մասին: Նա օգտագործել է մեծ թվով արխիվային նյութեր, այդ թվում՝ Երևանի Ե. Չարենցի անվ. գրականութեան և արվեստի թանգարանի և Վիեննայի Միլիթարյանների արխիվների նյութերը: Նա մանրակրկիտորեն ուսումնասիրել է Կոմիտասի հիվանդութեան պատմութիւնները, որոնք պահվում են Փարիզի Վիլլ ժյուլիֆ և Վիլլ էվլար հոգեբուժական հիվանդանոցների արխիվներում, ինչպես նաև հիվանդութեան արտորոշումը ճշգրտելու համար հոգեբուժութեանը վերաբերող աշխատութիւններ:

Հեղինակն իր գրքի տառաբանում գրում է, որ Կոմիտասի հիվանդութեան արտորոշումը եամահու ճշգրտելու հարցով նա սկսել է զբաղվել 1988 թ. կասկեր հաստատելով Փարիզի Վիլլ ժյուլիֆ հոգեբուժարանի հետ, որտեղ Կոմիտասն անց է կացրել իր կյանքի վերջին 13 տարիները, այսինքն՝ գրեթե 53 տարի անց այն պահից, երբ հանճարը հրաժեշտ տվեց ասլրողների աշխարհին (էջ 4):

Ռ. Սյուլահյան-Կուլումջյանն իրափայլի է նշելով, որ Հայոց ցեղասպանութեանը վերաբերածների ետորափմատիկ հոգեփիճակի, հոգեկան խանգարումների հարցը շատ թույլ է ուսումնասիրված: Եվ այդ առթիվ Ռ. Սյուլահյան-Կուլումջյանն իրափամբ գրում է. «Այսօր ես ավելի քան երբևէ հավատում եմ, որ Կոմիտասի տառապանքների մանրակրկիտ արտորոշումը կօգնի վերագնելու լուրթյան պատենը և թյուրիմա-

ցությունը, որոնք այդքան երկար ժամանակ խանգարել են հոգեբույժներին և մյուսներին քննարկելու հայոց ցեղասպանության տրամադրիկ հետևանքները» (էջ 5):

Մնում է ավելացնել, որ դա արտակարգ կարևոր է ցեղասպանությունը որպես մարդկության և մարդկայնության դեմ ուղղված ծանրագույն միջազգային ոճիր որակելու տեսանկյունից: Մեր կարծիքով, սրանում է նաև Ռ. Սյուլաճյան-Կուլումջյանի գրքի նշանակությունը: Այն, որ դիրքը դրված է հոգեբույժի կողմից և մասնագիտական առումով, այս աշխատության առանձնահատկությունն է, որը սարքերում է նրան մինչև հիմա Կոմիտասի մասին գրվածներին, բայց ոչ միակ արժանիքը:

Ռ. Սյուլաճյան-Կուլումջյանն ուսումնասիրել է Կոմիտասի կյանքը և գործունեությունը ընդհուպ մինչև մտերմիկ ներաշխարհի ծալքերը և այդ ամենից պեղել է նրա ամբողջական, իրական կերպարը իբրև սրբապառակների: Բայց հեղինակը չի աստիճանաբար Կոմիտասին: Նա կենդանի սրբապառակներ է՝ մարդ և մարդկային, անարատ ու անրիժ: Երբ ընթերցում ես երգչուհի Մարգարիտ Բաբայանի հետ նրա մտերմական հարաբերությունների մասին, հասկանում ես, որ մարդկային ոչինչ լուրջ չի եղել կուսակրոն վարդապետին, այդ թվում ամենավերական և ամենաանբացատրելի զգացումը՝ սերը, բայց աստվածային, բյուրեղյա սերը: Նույն անմնացուղ սիրով ու նվիրվածությամբ Կոմիտասը սիրել է հայրենիքը, իր ժողովրդին, նրա պատմությունը, դրականությունը, հավատը, երաժշտությունը: Ռ. Սյուլաճյան-Կուլումջյանի կատարած «պեղումներից» պարզվում է, որ այս ամենը, ինչպես նաև անբուժելի հիվանդության սաղմերը, Կոմիտասի մեջ ներդրված էին մանկության տխուր տարիներից:

Գերմանիայում և Ֆրանսիայում սովորելիս Կոմիտասը խորացավ և հմտացավ եվրոպական դասական երաժշտության մեջ և եվրոպական նրբաճաշակ երաժշտասեր հասարակությանը ներկայացրեց Հայ ժողովրդական երաժշտությունը, որն ինքը բարձ-

րացրել էր եվրոպական դասականության մակարդակի: Կոմիտասի շնորհիվ եվրոպան ընկալեց և բարձր դնահատեց Հայ երաժշտությունը:

Բայց դա արդեն իսկական հայկական սուլպային երաժշտությունն էր, որը Կոմիտասի ջանքերի շնորհիվ մաքրվել էր ստարապահեցություններից և հառնել իր նախաբնական անխեղաթյուր տեսքով: Սրանք վաղուց հայտնի և բազմիցս կրկնված ճշմարտություններ են, բայց, երբ դրում ես Կոմիտասի մասին, պարզապես չես կարող չըջանցել ամենից առաջ հենց այդ ճշմարտությունները, ինչպես նաև այն, որ Կոմիտասը ճիշտ էր հասկացել, որ հայ ազգային երաժշտության իրական բնույթն ամենից ավելի պահպանվել էր ժողովրդական և կենդանական երգեցողության մեջ: Եվ Կոմիտասը դիմեց այդ ակունքներին: Այդ մասին հեղինակը գրում է. «Հայ գեղջկական երգերը... հանպատրաստից հորինված տիպիկ կտորներ են, որոնք արտացոլում են դյուրական կյանքի վայրկյանները կամ էլ արտահայտում հանրության ուրախությունը ամուսնույթյան, կամ վիշտը՝ մահվան ժամանակ: Այս կտորներից շատերը գրի առնվեցին տասնիններորդ դարի վերջին և քսաներորդ դարի սկզբին, ինչդիր, որին Կոմիտասը նվիրեց իր կարիերայի մեծ մասը: Հաջորդ տասնամյակներին դրանք ծառայեցին իբրև հում նյութի ջրառատ աղբյուր Հայ կոմպոզիտորների համար...»: Այս միտքը փոխառված է երաժշտագետ Մաթևոս Մուրադյանից (էջ 26):

Իրավիս, Կոմիտասը կարող էր ավելի շատ ժամանակ տրամադրել ստեղծագործությանը, դրեւ մեծ կտավի գործեր: Բայց նա իր առաքելությունը տեսնում էր այլ բանում: Նա բանահավաք էր, Հայ ժողովրդական մեղեդիների մշակող, դաշնակող, մեկնաբան: Նա ստեղծեց երգչախմբեր, մտցրեց բազմաձայն երգեցողություն: Նրա գործունեությունը բազմաբովանդակ էր և բազմաշերտ: Հանճարեղ Կոմիտասն ինքնամոռաց կերպով և անձնագոհաբար կատարելով Հայ երգի ու երաժշտական մշակույթի փրկության առաքելությունը, իր ժողովրդին վերադարձրեց նրա հոգեկան ան-

կախություն հզորագույն կուլաններից մեկը և անմահացրեց նրան:

Գիրքն ընթերցելիս մեզ անընդմեջ հետապնդում է այն համոզումը, որ իբրև հոգեբան, Հեղինակն իր դրքի բոլոր մասերում հետամուտ է Կոմիտասի մահվան պատճառներին: Նկարագրելով վաղ հասակում որբացած Սողոմոնի տվյալանքները, նա գրում է, որ ծնողներին կորցրած հոգեխոց դեռատիները, ինչպես նաև չափահասները փրկություն են որոնում թափառումների մեջ: Տխուր մանկությունը Կոմիտասին դարձրել էր ծայրահեղ դուրսագրգիռ, զրպույն, շուտ փրավորվող: Այդ պատճառով հեղինակն անդրադառնում է նրան շրջապատող միջավայրին, մարդկանց, նրանց վերաբերմունքին հանճարի նկատմամբ, նրա անձի շուրջ բամբասանքներին, մասնավորապես, կապված Մարգարիտա Բաբայանի հետ ունեցած սրտագին կապերին: Անբարյացակամությունը, նախանձը, հակակրանքն իր հանդեպ, վերջին հաշվով, չէին կաշկանդում Կոմիտասին իբրև ստեղծագործողի և մարդու, բայց սլատճառում էին նյութանոր հոգեկան տվյալանքներ խորացնելով չարաբաստիկ վտանգը: Սակայն հանպուշտուծումը եկավ Մեծ եղեռնի հետ: Լինելով առաջին աքսորականներից մեկը՝ Կոմիտասն իր աչքերով տեսավ, թե ինչպես է նահատակվում իր ժողովուրդը: Եվ հարվածը սոսկալի էր ու անդառնալի:

Ճիշտ է, Կոմիտասը չսպանվեց աքսորի ճանապարհին, ինչպես Ջոհրապը, Վարուժանը, Սիամանթոն, Ռուբեն Սևակը և մյուսները: Նրա աքսորը տեղեց մինչև Չանկիրի քաղաքը: Այստեղ հասած 291 աքսորականներից կենդանի մնացին միայն քուռուսունը: Նրանցից յոթը, որոնց թվում էր Կոմիտասը, թալիսթի հրամանով անջատվեցին քարավանից և վերադարձվեցին Կ. Պոլիս: Ըստ գրքում բերված տեղեկության, միջամտել էր Կ. Պոլսում ԱՄՆ-ի դեսպան՝ Զ. Մորգենթաունը: Բայց ճակատագիրն իր խոսքն արդեն ասել էր: Երիտթուրքերի կառավարությունն իր բանակով, ոստիկանությամբ, ժանդարմերիայով, կրոնավորների և թուրք խուժանի օգնությամբ ֆիզիկապես բնաջնջում էր արևմտահայությունը: Հարվածը չափից ավելի մեծ էր, որպես-

զի վերջնականապես չխախտել Կոմիտասի գերզգայուն հոգու հավասարակշռությունը, նա դարձավ մռայլ ու լուսկայաց:

Ռ. Սյուլահյան-Կուլումջյանը եզրակացնում է, որ Կոմիտասի հիվանդության պատճառը օսմանյան կառավարությունն էր, որի համար դա «Հայերի խորհրդանշական պարտությունն էր գոյատևելու համար պայքարում: Թուրքերը փոքրիկ հաղթանակ էին տարել ավերելով Հայ երաժշտական մտքի հրաչքներից մեկը» (էջ 162):

Կ. Պոլսի հիվանդանոցներում բուժումներն արդյունք չէին տալիս, և բարեկամները որոշեցին Կոմիտասին տեղափոխել Փարիզ: Ֆրանսիայում բուժվելու տարիները Ռ. Սյուլահյան-Կուլումջյանը համարում է կորուսյալ տարիներ: Իբրև մասնագետ, նա գերմանական հոգեբուժական դպրոցի հետևորդ է, որը, նրա կարծիքով, ամենաառաջադեմականն է: Այն այդպիսին էր և անցյալ հարյուրամյակի 30-ական թվականներին, բայց ֆրանս-գերմանական դարերի խորքից եկող ազգամիջյան ատելության պատճառով, ինչպես ճիշտ նկատել է Հեղինակը, մերժված էր ֆրանսիական հոգեբուժության կողմից: Իսկ չէր կարող իր ազդեցությունը չթողնել Կոմիտասի հիվանդության արտոքոչման և բուժման վրա:

Հեղինակն իր գրքում անդրադառնում է հիվանդին այցելած ծանոթների հուշերում եղած տպավորություններին, որոնք ապացուցում են, որ հիվանդը ժամանակ առ ժամանակ պայծառամիտ էր դառնում: Այսպես, փարիզաբնակ նկարիչ Փանոս Թերլեմեզյանի պատմածից երևում է, որ Կոմիտասը հիվանդ չէր շիզոֆրենիայով (էջ 185): Իսկ նկարչի հարցին՝ ո՞ր երաժշտությունն է ավելի լավ՝ հայկականը, թե՞ եվրոպականը, կոմպոզիտորը բարկություն պատասխանել է, որ չի կարելի դեղձի համ առնել ծիրանից: Հայտնի հայ գրող, Կոմիտասի համաքաղաքացի Ասատուր Նավարյանը, Կոմիտասի երգչախմբերից մեկի նախկին անդամների՝ Թորոսյան քույրերի ուղեկցությամբ այցելեց հիվանդին 1927 թ. դեկտեմբերին, երբ կոմպոզիտորը 57 տարեկան էր: Մեկ ամիս անց «Հառաջ»-ում տպագրված հոդվածներում Կոմիտասի տեսքն անվանելով «ողբերգական», նա սլատմում էր, որ

զրույցի միջոցին հիվանդը հիշեց իր աքսորը Ջանկիրի և անդրադարձավ «տան» (Հայրենիքի) Հարցին, ասելով: «Մեր տները մեր ազգային հողն է... Տունը Հանրային միավորի անկյունաքարն է... Երբևէ հեղեղը, արյունալի հեղեղը գալիս է և սրբում տանում մեր տները...» (էջ 191):

Ռ. Սյուլահյան-Կույումջյանի գրքի այս գլուխը (գլուխ 9-րդ) նորոշվել է և առանձնանում է իր դիտական խորությամբ, մասնագիտական վերլուծություններով: Քննարկելով հիվանդությանը վերաբերող փաստաթղթերը, գրանցում եղած նկարագրությունները, հիշատակվող փաստանշանները, Համադրելով հոգեբուժության նշանավոր ներկայացուցիչների մշակած տեսությունների հետ, հեղինակը հանդում է այն հետևությունը, որ Կոմիտասի հիվանդության փաստը մասնաշաղկապ է հայ լիբիզի Կոլոլյանի վաղ փաստորոշումն էր: Կոլոլյանը բուժել էր Կոմիտասին, բայց ի տարբերություն օ-

տարագրի բժիշկների, դիտել հիվանդին ոչ միայն անձամբ, այլև որպես Հայ ժողովրդի Համար անսահման կարևոր մի դեմքի: Հեղինակը Համաձայն է Կոլոլյանի հետ, որ Կոմիտասի հիվանդությունն ուներ «ներքին» պատճառ՝ անձնական կյանքի դառնությունները, և «արտաքին» պատճառ՝ Հայոց ցեղասպանությունը: Վերջինս էլ եղավ վճարական հարվածը, որը Կոմիտասի հիվանդությունը դարձրեց անշրջելի:

Մնում է ավելացնել, որ հոգեբույժ Ռ. Սյուլահյան-Կույումջյանի գրքի արժանիքներից մեկն էլ այն է, որ այն գրված է անդրերկրից և լավ անդրերկրից, հետևաբար Ռ. Սյուլահյան-Կույումջյանի գիրքը լրացնում է փաստարկների այն զինանոցը, որը պետք է Համայն Հայությանը և Հայաստանի Հանրապետության իշխանություններին, որոնք միջազգային ատյաններում պաշտոնապես բարձրացրել են Հայոց ցեղասպանությունը ճանաչելու հարցը, թեկուզ առայժմ առանց փոխհատուցման պահանջի:

ՀԱԿՈՒ ՀԱԿՈՒՅԱՆ